ԱՎԵՏԻՍ ՔԱԼԱՇՅԱՆ
փիլ. գիտ. թեկն., դոց.

# ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ՊԱՏՄԱԲԱՆՆ ՈՒ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ (Պ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 70-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻՆ)



2014 թ. հունիսի 22-ին լրանում է մեփորյա հայ պատմագիտական մտքի և մանկավարժության երախտավորներից մեկի, Հայաստանի վաստակավոր մանկավարժ, Հայ Առաքելական Եկեղեցու պատվո բարձր՝ «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» շքանշանակիր, Երևանի պետական համալսարանի ոսկե մեդալակիր, Երևանի պետական համալսարանի Հայոց պատմության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, Գևորգյան Հոգևոր ճեմարան-Աստվածաբանական համալսարանի պրոֆեսոր, Հանրապետության բազմաթիվ գիտական, գիտամեթոդական, ուսումնական և խմբագրական խորհուրդների անդամ, պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Պետրոս Հովհաննեսի Հովհաննիսյանի ծննդյան 70-ամյակը:

Ծնվել է Լենինական (ներկայիս Գյումրի) քաղաքում[1]: Իր սերնդակիցներից շատերի նման նրան ևս վիճակված է եղել անցնել ինքնահաստատման դժվարին, բայց միանգամայն ինքնուրույն ճանապարհով: 1951-1961 թթ. սովորել և բարձր գնահատականներով ավարտել է հայրենի քաղաքի ճանաչված հանրակրթական հաստատություններից Վ. Մայակովսկու անվան թիվ 5 միջնակարգ դպրոցը, որից հետո 1 տարի աշխատել է քաղաքի «Ստրոմմաշինա» գործարանում:

1962 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ: 1964 թ. զորակոչվել է Խորհրդային բանակ և 1964-1965 թթ. սովորել

1 Նա երզնկացի Հովհաննես Պողոսի Հովհաննիսյանի և տրապիզոնցի Վարդանուշ Հովսեփի Լուսպարյանի խստաբարո, սակայն անաչառ ու մեծ պատասխանատվությամբ աչքի ընկող ընտանիքի ութ զավակներից հինգերորդն է:

Բալաշով քաղաքի (Սարատովի մարզ) ռազմաօդային ուժերի հատուկ դպրոցում: Սակայն ավանդապաշտ ընտանիքից ժառանգած՝ հայոց պատմության նկատմամբ սերը ավելի զորավոր էր, և ծառայությունն ավարտելուց հետո նա ուսումը շարունակել է ԵՊՀ-ում, որն ավարտել է 1970 թ.: Նույն թվականին ընդունվել է ԵՊՀ ասպիրանտուրա, որն ավարտել է 1973 թ.: 1975 թ. աշխատանքի է անցել ԵՊՀ պատության ֆակուլտետում որպես Վ. Ռշտունու անվան գիտական կաբինետի վարիչ: 1976 թ. պաշտպանել է «Հայաստանի ֆեոդալիզմի դարաշրջանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրությունը ակադեմիկոս Հակոբ Մանանդյանի աշխատանքներում» թեկնածուական ատենախոսությունը և ստացել պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1977 թ. սկսվել է նրա բեղուն մանկավարժական գործունեությունը համալսարանի Հայոց պատմության ամբիոնում նախ որպես դոցենտի պաշտոնակատար (մինչև 1984 թ.), դոցենտ (1984-2004 թթ.) և ապա պրոֆեսոր (2004 թ.):

Արդեն իսկ ուսանողության շրջանում հոգու կանչով Պ. Հ. Հովհաննիսյանը մեծ ջանասիրությամբ խորամուխ է եղել հայոց պատմության բնագավառում: Եւ այս երկարուձիգ տարիներին, անգամ գաղափարական կարծրատիպերի գերիշխանության պայմաններում նա անդավաճան կերպով դավանել է գիտնականի ազատության իրավունքը, քաջ գիտակցելով նաև, որ ազատությունը անբաժան է ճշմարտությունից և պատասխանատվությունից: Համալսարանական աշխատանքի ողջ ընթացքում նա դավանել է նաև այն սկզբունքը, որ հայ ժողովրդի անցյալն ու ապագան միասնական են, որ մենք ապրում և կրթություն ենք ստանում այդ միասնության մեջ: Համոզված, որ Հայոց պատմությունը ոչ միայն մեր անցյալի վկան է, այլև մեր գործերի գանձարանը, օրինակ և խրատ ներկայի համար, նախազգուշացում՝ գալիքի համար, նա գոյություն ունեցող իրականությունը մշտապես համարել է իբրև այդ միասնության արդյունք և քայլ առ քայլ ուսանողներին բացահայտել և պատկերավոր ներկայացրել է «հայոց պատմության հարատև գրքի էջերը»:

Գաղտնիք չէ, որ պատմությունը նույնպես դպրոց է, որտեղ ճշմարտությունը շատ անգամ կամայական նենգափոխման կամ այլամեկնության է ենթարկվում: Այդ կապակցությամբ առավել գործուն դերակատարություն է վերապահված այն վերլուծաբաններին, որոնց գրիչը ծառայում է մեն մի նպատակի՝ ճշմարտության վերհանմանը, իսկ ամեն մի ճշմարտություն միշտ դուրս է գալիս ավելի հզոր, քան կեղծիքը: Մյուս կողմից, հայտնի է, որ տարբեր պատճառներով «Անցյալ սերունդները մեզ ոչ այնքան հարցերի պատրաստի որոշումներ են թողել, որքան բուն հարցեր» (Սենեկա Կրտսեր): Եւ քանի որ մենք ապագա ենք մտնում անցյալին նայելով, պատմությունը հանդես է գալիս այն պատկերասրահի տեսքով, որի բնօրինակները սակավ են, իսկ պատճենները՝ բազում: Այդ ամենով հանդերձ պատմությունը ի վերջո վերածվում է կյանքի յուրատիպ դասագիրքի:

Այդ տեսանկյունից պրոֆ. Պ. Հ. Հովհաննիսյան դասախոսին բնութագրող հատկանիշներից մեկն այն է, որ նա պատմաբանի իր ընկալումները ծառայեցրել և ծառայեցնում է կյանքի պայմաններով թելադրված օբյեկտիվ ճշմարտության վերհանմանն ու արժևորմանը, և բազմակողմանի գործունեությամբ ու ստեղծագործ ոգով յուրատիպ սնուցող աղբյուր է հանդիսանում ուսանողների համար: Պ. Հովհաննիսյան դասախոսի բնութագրող հատկանիշներից են նաև իմաստնության և անձնական պատասխանատվության զուգորդումը. պատասխանատվությունը դասախոս-մանկավարժի պարտականությունն արդյունավետ իրագործելու, պատասխանատվությունը իր արժեքը գիտակցող որակյալ մասնագետ կադրերի պատրաստման գործում: Բայց մեծահարգ հայագետ-պատմաբանի և մանկավարժի հատկանիշներից թերևս ամենակարևորը մասնագիտական խորիմացությունն է, իսկ ամենաօգտակարը՝ պրպտուն միտքը և բեղուն գրիչը:

Վաղուց ասված է, թե ուսուցման ու դաստիարակության մեջ գլխավոր գործոններից մեկը դասավանդող մանկավարժն է ու նրա մտածելակերպը, որոնց ազդեցությամբ է պայմանավորված ոչ միայն ճշմարիտ դաստիարակությունը, այլև՝ ունկնդիրների ընդունակությունների զարգացումը: Եւ շուրջ 40 տարի պրոֆ. Պ. Հ. Հովհաննիսյանը, այդ կարգախոսին անդավաճան, ուսանողներին կրթում և դաստիարակում է իրական հայրենասիրության և ազգասիրության ոգով: Նրա նախընտրած ուսումնասիրության գլխավոր առարկան հայոց պատմական անցյալն է և ներկան, որոնց համակարգված արժևորման միջոցով ապագա մասնագետներին է մատուցում նաև ցանկալի ապագան կերտելու մանրակերտը: Հարկավոր է սիրել սեփական պատմությունը, սովորեցնում է նա, դասեր քաղել նրանից: Միայն այդ ճանապարհով կարելի է հասնել իրական ազգասիրության և հայրենասիրության: Եւ այդ ամենը խտացված կերպով դրսևորվում է իրեն բնորոշող հազվեգյուտ, ոգեղեն ու կրակոտ դասախոսությունների տեսքով: Իսկ տպավորությունն այնպիսին է, որ ունկնդիրները ասես ականատես են դառնում մեր ժողովրդի պատմության և՛ փառավոր էջերին, և՛ պատմության քառուղիների անհաջողություններին ու ողբերգական իրադարձություններին: Եւ քանի որ նրա դասախոսական լեզուն կենդանի է, կենսունակ, ներգործուն և ոգեղեն, մեր ժողովրդի պատմական ընթացքը ներկայացվում է որպես հարուստ և բովանդակալից իրադարձություններով լեցուն հարատև շղթա, որը ունկնդիրներին անցյալի և ներկայի միջոցով տանում է դեպի ազգային վառ ապագա:

Ասված է, թե «պատմաբանի պարտականությունն այն է, որ տարբերի խակականը կեղծիքից, որոշակին՝ խառնակիից, կասկածելին՝ անընդունելիից»: Սույն աֆորիզմը թե՛ իմաստի և թե՛ բովանդակության առումով նույնպես լիովին բնութագրական է պրոֆ. Պ. Հ. Հովհաննիսյանի գիտամանկավարժական գործունեությանը: Լինելով իր բնագավառի բազմագիտակ ներկայացուցիչներից մեկը, աշխարհընկալման ոլորտում նա դրսևորում է իսկական բազմակողմանիություն և ստեղծագործական հավասարակշռություն: Նրա մանկավարժա-

կան մեթոդիկան պարզ է ու բովանդակալից. նա ձգտել և ձգտում է հարստացնել ուսանողության ներաշխարհը, նրանց սովորեցնում է ճանաչել իրենց, որով ընդլայնում է նրանց ստեղծագործական ինքնագիտակցությունը: Համոզված, որ ընդհանուրով հանդերձ, յուրաքանչյուր դարաշրջան բնորոշվում է իրեն յուրահատուկ խնդիրներներով, վաստակաշատ մասնագետը ոչ միայն քայլ առ քայլ բացահայտում է դրանց էությունը, այլև ներկայացնում է մի այնպիսի տեսլական, որը սերտորեն կապված է ազգային առաջընթացի, համազգային խնդիրների, ազգային ինքնության և բարոյական կերպարն անաղարտ պահպանելու հրամայականների հետ: Եւ որ ամենակարևորն է, հայոց պատմական անցյալի ու ներկայի անկողմնակալ ուսումնասիրության հիման վրա նա սերմանում է այն համոզմունքը, որ մեր ազգային և հասարակական կյանքում կարևորը ոչ այնքան դիրքն է, որում մենք գտնվում ենք, որքան այն ուղղությունը, որը ընտրում և որով ընթանում ենք:

Փաստ է, որ ամենևին էլ բավական չէ ցույց տալ, որ ներկան բարձր է անցյալից. հարկավոր է նաև ապագայի կանխազգացում ձևավորել: Մանկավարժական այդ խնդիրների իրագործման ժամանակ ևս պրոֆ. Պ. Հ. Հովհաննիսյանը դրսևորում է ստեղծագործ միտք: Այդ կապակցությամբ ավելորդ չէ մեկ անգամ ևս հավաստել, որ հոբելյարի անձում միավորվել են անցյալի իմաստավորված զգացումը, բանավոր և գրավոր խոսքի  արտահայտման հմտությունը, քննախույզ մտքի թռիչքը և ըմբռնման խորությունը: Դրանցով է պայմանավորված նաև այն, որ պատմական իրականությունը նա պատկերում է և՛ խորությամբ, և՛ բազմազանությամբ, որով ունկնդիրներին և ընթերցողներին հնարավորություն է տալիս ապրելու այդ կյանքով: Պրոֆ. Պ. Հ. Հովհաննիսյանը անվանի մանկավարժ է և հետազոտող: Եւ որ ամենակարևորն է, այդ որակները նրա մեջ խորապես ներթաթախված են ազգայինով: Նրա իմացական հետաքրքրությունը սերտորեն շաղկապված է քննախույզ մոտեցման հետ, որը նրան թույլ է տալիս և՛ շատ տեսնել, և՛ շատ յուրացնել, և՛, բնականաբար, շատ մտածել: Եւ ժամանակի ընթացքում նա որքան խորն է ըմբռնել ու արժևորել պատմական իրականությունը, այնքան խորն է հասու եղել իր ժողովրդի անցյալ ու ներկա իրողություններին, այնքան նա ավելի արդյունավետ կերպով է նպաստել իր սիրելի ժողովրդի ապագայի կայացմանը:

Ընդունված է մարդու մասին դատել ոչ թե նրանով, թե նա ինչ չի արել, այլ նրանով, թե ինչ է արել իր դարաշրջանի համատեքստում: Այդ տեսանկյունից հոբելյարի գիտական և մանկավարժական պրակտիկայում պատմական իրականությունը ներկայացվել է իր «մաքուր տեսքով», առանց հավելումների, առանց սնապարծության, իր բնական վիճակում: Ու թեև անառարկելի իրողություն է, որ հասարակական կյանքի առաջընթացն անհնար է առանց սոցիալ-տնտեսական, քաղաքական, գիտական ու տեխնիկայի զարգացման, այդ գործընթացում ազգերի ու ազգությունների համար հավասարապես կարևոր են նաև ազգային ինք-

նության վերարտադրության գործուն մեխանիզմների մշակումը: Իսկ վերջինս նույնքան անհնար է առանց պատմական գիտակցության, առանց ավանդական արժեքների պահպանության ու վերարտադրության: Այդ ամենի հաշվարկով իր ողջ գիտակցական կյանքում պրոֆ. Պ. Հ. Հովհաննիսյանը արժևորել է գիտելիքը, որը նրա համար արգասաբեր է համարվել յոկ այն պարագային, երբ այն պայքարել է հանուն վեհ նպատակի, միտված է եղել հասու լինելու ազգային առաջնահերթություն համարվող գործնական ճշմարտությունների հաստատմանը: Եւ դա է պատճառը, որ նրա դասախոսական խոսքը բովանդակում է ավելին, քան պահանջվում է: Տողերիս հեղինակը ևս ժամանակին եղել է հոբելյարի ուսանողը և շնորհակալ է նրան այն բանի համար, որ հազարավոր այլ սաների նման սիրելի դասախոսի հետ «ձեռք-ձեռքի անցել է հայոց պատմության քառուղիներով»[2]:

Պրոֆ. Պ. Հովհաննիսյանի շուրջ 40-ամյա գիտամանկավարժական բեղուն ճանապարհը ակամա հանգեցնում է այն հետևության, որ գիտական նվաճումները ևս ունեն իրենց հաղթանակները, որոնք իրենց ոգեշունչ էությամբ շատ անգամ չեն զիջում անգամ ռազմական հաղթանակներին: Ավելի ճիշտ կլինի ասել, որ այդ պարագայում ուժի, զենքի հաղթանակը ամրապնդվում, ամրագրվում և բնականորեն լրացվում է ոգու հաղթանակով: Ու թեև գիտության պատվին հուշարձանները, որպես կանոն, բացակայում են կամ խիստ հազվադեպ են, այդ տեսանկյունից **գիտնականի համար հուշարձանի են վերածվում նրա երկնած այն աշխատանքները**, որոնք մղում են սպանում նրա հոգեկան ներաշխարհից ու համոզմունքից: Իսկ դա լրացուցիչ մեկ անգամ ևս փաստում է այն ճշմարտությունը, որ **առանց նվիրումի ոչնչի հասնել հնարավոր չէ**:

Ազգային առաջընթացն այն խոչընդոտների վերացման մեջ է, որը մարդուն կախման ու ստորադասության մեջ է դնում պարագաներից: Այդ ոլորտի կարևորագույն քայլերից մեկը ազգային պատմության «սև» և «սպիտակ» էջերի վերծանումն է, իմաստավորումը, համակողմանի գնահատումն ու արժևորումը՝ սխալները չկրկնելու և դեպի ապագա վստահ ընթանալու համար: Այդ ամենի խոր գիտակցությամբ էլ Պ. Հովհաննիսյան դասխոսը արմատավորում է այն համոզմունքը, որ անհրաժեշտ է մշտապես սովորել, քանի դեռ ինչ-որ բան տա-

---

2 Այդ կապակցությամբ բնորոշ են Պ. Հ. Հովհաննիսյանի սաներից մեկի, ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. Է. Գ. Մինասյանի հետևյալ տողերը. «Նրա շուրջ քառասունամյա դասախոսական աշխատանքը կրթության գործի անխոնջ սպասավորի երկար ու դժվարին ճանապարհ է, մեծ սիրո ու նվիրումի փայլուն առհավատչյա: Պ. Հովհաննիսյանի դասախոսություններում լավագույնս մեկտեղված են մատուցվող նյութի գիտական բարձր մակարդակը և մատչելիությունը: Նա օժտված է բացառիկ մի կարողությամբ պատմական անցքերն ու եղելությունները, փաստական տվյալները զուգորդելու հուզական ու պատկերավոր դրվագներով, շեշտելով հայ ժողովրդի սխրագործ ու կենսահաստատ ներուժը: Նրա գործը մեծ հորդոր է իր սաներին լինելու այս երկրի արժանավոր քաղաքացիներ՝ օժտված ազնիվ ու շիտակ կեցվածքով, մեր հոգևոր-մշակութային ժառանգության հանդեպ հոգածության ու պատասխանատվության բարձր զգացումով: Ուսանողական բազում սերունդներ, ամենատարբեր ֆակուլտետների շրջանավարտներ միշտ էլ հիացումով ու սիրով են հիշում իրենց պատկառելի դասախոսի անկրկնելի դասախոսությունները», («Պետրոս Հովհաննիսյան». Կենսամատենագիտություն, Երևան, 2014, էջ 4):

կավին անհայտ է, կամ սպասում է իր լուծմանը: Ավելորդ չէ պնդել նաև, որ այդ գործընթացում նա ինքն է օրինակ հանդիսանում, ցույց տալով որ դեռևս անհայտի, դեռևս «անասելիի» խորը զգացողությունն է, որը ծնունդ է տալիս նոր որոնումների ու նոր գաղափարների: Իբրև մանկավարժ խիստ է, բայց՝ օբյեկտիվ: Գործնական կյանքում նրա համար հիմնովին անընդունելի են ծուլությունը կամ ուսանողական պարտականությունների կատարման որևէ այլ թերացում: Նրա դասախոսությունները ուսանողությանը տալիս են անհամեմատ ավելին, քան ծրագրային պահանջներն են, բայց պահանջում է այն, ինչը պարտադիր է ապագա մասնագետի համար: Ահա թե ինչու նրա մանկավարժական գործունեության գնահատմանը պետք է անդրադառնալ **ոչ միայն այն տեսանկյունից, թե նա ինչ է անում, այլև այն տեսանկյունից, թե ինչպես է անում**: Իսկ այն, ինչ պրոֆ. Պ. Հ. Հովհաննիսյանն անում է մանկավարժության ոլորտում և գիտության դաշտում, ոչ միայն օրինակելի է, այլև՝ ուսանելի:

Ավանդական ճշմարտությունների շարքը պետք է դասել այն պնդումը, թե «մեծ գործեր կատարելու համար պետք չէ լինել մեծագույն հանճար, պետք չէ լինել մարդկանցից ավելի բարձր, պետք է լինել նրանց հետ» (Մոնտեսքյո): Եւ պետք է փաստել, որ բազմահմուտ հոբելյարը իր նվաճած բարձունքի դիրքերից անգամ ջանք չի խնայում, որպեսզի ուսանողները և բազմահազար ընթերցողները իրենց ջահերը վառեն իր գիտելիքներից և այդ նվիրական գործին է ծառայեցնում ինչպես հմուտ մանկավարժի փորձը, այնպես էլ ուսումնասիրողի բեղուն գրիչը: Նրա համար աներկբա է, որ կրթական գործի կարևորությունն առաջին հերթին կայանում է նրանում, որ ապագա մասնագետներն իրենց աշխարհընկալման և արժեքանական ըմբռնումներում յուրացնեն, սեփականը դարձնեն ոչ միայն ազգայինը, այլև՝ համամարդկայինը: Այլ կերպ ասած՝ նրա ըմբռնմամբ կրթությունը այն բնական կապի ամրապնդումն է և իմաստավորումը, որը գոյություն ունի առանձին անհատի և հասարակության, ազգային անցյալի իմացության և ներկայի միջոցով դեպի ապագա ընթանալու ճանապարհին: Իսկ այդ գործընթացի կարևորագույն օղակներից է համարում ոչ թե կույր վերարտադրությունը, այլ՝ քննական յուրացումը, մտածողության և ընկալման միջոցով համապատասխան աշխարհայեցողության դրսևորումը: Ըստ որում, այդ ամենը նա սերտորեն շաղկապում է պատասխանատվության և բարոյական կրթության հետ, որոնց բացակայության պայմաններում, նրա համոզմամբ, գիտելիքը չի կարող ծառայել ապագա մասնագետների ստեղծագործական նպատակներին: Այստեղից՝ ուսանողության շրջանակներում պրոֆ. Պ. Հովհաննիսյանի կողմից սերմանվող այն մոտեցումը, որ **գիտելիքներ կուտակելը քիչ է. հարկավոր է հնարավորին չափ դրանք լայնորեն կիրառել և արմատավորել գործնական կյանքում**:

Իր գիտելիքներով և մանկավարժական հմտությամբ կանգնած լինելով արդի հայագիտության բարձունքին, նա դրանով իսկ **իրականացնում է ժամանակ-**

**ների կապը, հանդիսանում է սերունդների կապի յուրահատուկ օղակ**: Նաև մեծ է նրա ներդրումը ապագա մասնագետների կողմից ազգային կյանքի անցյալ-ներկա-ապագա շղթան ընկալելու և իմաստավորելու գործում: Նա սովորեցնում է, որ կրթությունը մի այնպիսի գործընթաց է, որը ճշմարտացի լինելով նաև պետք է լինի պարզ, հստատուն և կատարյալ: Միայն այդ դեպքում այն կարող է նպաստել դաստիարակության, բարոյական անաղարտության և հոգեկան հարստության խելամիտ զուգորդմանն ու կատարելագործմանը: Եւ այդ տեսանկյունից պետք է միանգամայն տրամաբանական և օրինաչափ համարել այն, որ նա անմնացորդ կերպով իր փորձը և համոզմունքները փոխանցում է կրտսեր սերունդներին, նրանց մեջ տեսնելով ապագա գիտնականին, մանկավարժին, հոգևորականին և մշակութային գործչին:

Այդ ամենին զուգընթաց Պ. Հ. Հովհաննիսյան մանկավարժի գործունեությունը աչքի է ընկնում նաև փոխադարձությամբ: Նրա համար դասավանդության գործընթացում գլխավորը ոչ միայն նրանում է, թե ինչ տեղեկատվություն է տրվում, այլև նրանում, թե դա ինչպես է կատարվում և ընկալվում: Դա է պատճառը, որ նա «գլխավոր պարտականություն» է համարում նաև սաներին մտավոր աշխատանքի վարժեցնելը, իսկ այդ մոտեցումն, անշուշտ, ավելի կարևոր է, քան սոսկական մատուցելը: Ահա թե ինչու իբրև դասախոս-դաստիարակ նա ուսումնական գործընթացով թելադրված կապեր է հաստատում իր բոլոր սաների հետ, որով դասախոսի և սանի միջև հաստատվում է լիակատար վստահություն: Ավելորդ չէ փաստել նաև, որ սիրելի դասախոսի հոգեկան բարձր մակարդակը, նրա զուլալ բարոյական կերպարը ոչ միայն հիմք են հանդիսանում կրթության և դաստիարակության գործի նկատմամբ հոգատար վերաբերմունք դրսևորելու գործում, այլև՝ օրինակ է ուսանողների համար: Նա սովորեցնում է, որ ժողովրդի մեծությունը չափվում է ոչ թե նրա թվաքանակով, այլ նրա մտավոր, մշակութային և բարոյական զարգացման մակարդակով: Եւ հիմնավորում է, որ ազգի ապագան անհնար է տարանջատել կրթությունից ու դաստիարակությունից:

Ինքնին հասկանալի է, որ գիտելիքների շրջանակը գործնականում անսահման է: Այդ իսկ պատճառով մարդը (անգամ ամենահանճարեղը) հնարավորություն չունի և գործնականում ի զորու չէ իմանալ ամեն ինչ: Դրանով է բացատրվում նաև այն, որ մարդկային գիտելիքների անսահման օվկիանոսից արհեստավարժ մասնագետը անհրաժեշտորեն ընտրում է միայն ամենակարևորը, այն, ինչը հետազոտողին թույլ է տալիս դառնալ կոնկրետ բնագավառի իրավասու մասնագետ: Ահա թե ինչու միանգամայն տրամաբանական և օրինաչափ պետք է համարել այն, որ վաստակաշատ մանկավարժը արժանի ճանաչում ունի ոչ միայն Հանրապետության մայր բուհում: Իբրև ճանաչված հայագետ և մանկավարժ պրոֆ. Պ. Հ. Հովհաննիսյանը 1992-1993 թթ. դասախոսական աշխատանք է կատարել Համազգայինի Բեյրութի Հայագիտական բարձրագույն դասընթացներում: Նա մեծ լումա ունի նաև Հայ Եկեղեցու բարձրագույն կրթությամբ սպասա-

վորների պատրաստման գործում, որը դրսևորվել է Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցում (1995-1999 թթ.) և Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան-Աստվածաբանական համալսարանում (1999 թ. մինչ օրս) դասավանդելու ժամանակ: Անվանի դասախոսի գիտամանկավարժական վաստակը գնահատվել է նաև Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից, որի հրամանագրով 2004 թ. նրան շնորհվել է «Հայաստանի վաստակավոր մանկավարժ» կոչում[3]:

Որպես պատմաբան-հետազոտող պրոֆ. Պ. Հովհաննիսյանի գիտական հետաքրքրության առանցքը կազմել են միջնադարյան Հայաստանի պատմության հիմնահարցերը, հայոց պատմության աղբյուրագիտությունը և պատմագրությունը, ազատագրական շարժումներին, Հայկական հարցին, Սփյուռքի պատմությանը, ինչպես նաև՝ հայ պատմագիտական մտքի ականավոր ներկայացուցիչներին նվիրված աշխատանքները: Կարծում ենք վաստակաշատ դասախոսի և պրպտուն մտքի տեր հայագետ-գիտնականի բնութագրության համար շատ խոսքեր հարկավոր չեն, քանի որ այդ մասին պերճախոս վկայում է նրա գիտատեսական ժառանգությանը:

Այսպես, 1972-2013 թթ. ընթացքում գիտական և լրատու հրապարակություններում պրոֆ. Պ. Հովհաննիսյանի հրապարակած աշխատանքների թիվն անցնում է 400-ից[4], որոնք բոլորն էլ արժեքավոր աշխատանքներ են: Այդ ամենով հանդերձ՝ հայագիտության բարձունքներում կանգնած պատմաբանի գիտական վաստակի գնահատման գործում անհնար է չտեսնել նաև նրա համեստությունը: Այդ շարժառիթներն են ծնել հարգարժան պրոֆեսորի գրչին պատկանող հարյուրավոր գիտական հոդվածները, որոնցից էլ ամբողջացել է նրա արժեքավոր տեսական ժառանգությունը: Ականավոր փիլիսոփա Գ. Հեգելը ժամանակին համոզված պնդել է. «Նա, ով ծանոթ չի եղել նախնիների ստեղծագործություններին, ապրել է՝ չճաշակելով գեղեցիկը»: Կարծում ենք այդ ասույթը միանգամայն կիրառելի է բազմավաստակ հայագետի տեսական ժառանգության նկատմամբ, քանի որ նա ոչ միայն «ճաշակել է այդ գեղեցիկը», այլև հայտնի սահմաններում քայլ է կատարել նաև դեպի ապագա: Ինքնին հասկանալի է, որ մեկ հոդվածի շրջանակներում անհնար է ներկայացնել պրոֆ. Պ. Հ. Հովհաննիսյանի գիտատեսական ժառանգությունն իր ողջ ծավալով: Այդ իսկ պատճառով նպատակահարմար է անդրադառնալ նրա գրչին պատկանող, նրա կազմած և խմբագրած, ինչպես նաև նրա կողմից՝ անցյալի կոթողային նշանակություն ունեցող արժեքների հրապարակությանը: Առավել ևս որ ոչ ոքի համար գաղտնիք չէ այն, որ գիրքը մարդկային մտքի շարժիչն է և խոսափողը, գրքերում է անթեղված մարդկային հիշողությունը, ամեն մի գիրք յուրատիպ պայքար է մտավոր ծուլության դեմ, և այդ իմաստով ամեն մի հատոր հեղինակի կողմից մարդկությանը կտակ-

3 Տե՛ս «Պետրոս Հովհաննիսյան». Կենսամատենագիտություն, էջ 11:

4 Նշված թվականների հեղինակային հրապարակությունների ցանկը տե՛ս անդ, էջ 12-68:

ած մի նվեր է: Ավելի տրույզ՝ գրքերը մի սերնդի հոգևոր կրակն են հաջորդներին, քանզի նաև գրքերի միջոցով է ներկա սերունդը յուրացնում անցած դարերի հոգևոր կյանքի արժեքները, դառնում անցյալի ժառանգորդը:

Իզուր չէ ասված, որ «մարդկային ստեղծագործության բոլոր դրսևորումներից ամենազարմանալին և ուշադրության արժանին գրքերն են: Նրանցում են ապրում անցած ժամանակների խոհերը, ընբռնելի և պարզորոշ հնչում են անցյալի ձայները: Այն բոլորը, որ մարդկությունը կարարել է, խորհել, այն ամենը, ինչի նա հասել է՝ այդ բոլորը, ասես թե կախարդանքով, պահպանվել են գրքերի էջերում»: Այդ տեսանկյունից առաջին հերթին հարկ է անդրադառնալ անուրանալի այն վաստակին, որը պրոֆ. Պ. Հ. Հովհաննիսյանը ներդրել է ադոնցագիտության մեջ: Նրա ջանքերով են աշխարհով մեկ սփռված արխիվներից հավաքվել, ամբողջացվել ու հրատարակվել Ն. Ադոնցի տեսական հարուստ ժառանգության բազմաթիվ անտիպ էջեր: Նրա գիտական պրպտումների տրամաբանական արդյունքն է Նիկողայոս Ադոնցի՝ կորած համարվող արխիվի հայտնաբերումը[5], ինչը ճանաչված պատմաբանին թույլ տվեց ձեռնամուխ լինել հայագիտության համար անզուգական հրատարակության նախապատրաստությանը: Խոսքը վերաբերում է Ն. Ադոնցի՝ հավերժության գիրկն անցնող երկերի վեցհատորյակի[6] հրատարակությանը, որն այսօր իր արժանի տեղն է գրավել հայ տեսական մտքի գանձարանում և որում արտացոլված նյութերը կարող են սկզբնաղբյուր հանդիսանալ ապագա գիտական հետազոտությունների համար: Անհրաժեշտ է հավելել նաև, որ Ն. Ադոնցի հրատարակված հատորների տեսական արժեքն էլ ավելի ամբողջական է դարձել Պ. Հ. Հովհաննիսյանի կողմից բազմաթիվ հիմնահարցերի լուսաբանման և ծանոթագրությունների արդյունքում, որոնցում գիտական հակիրճությամբ և մեծ ճշգրտությամբ տրված են պատմական, ժամանակագրական, տեսական, պատմամշակութային և պատմակրոնագիտական բազմաթիվ հիմնահարցերի պարզաբանումները: Ադոնցագիտական հրատարակությունների շարքում անհրաժեշտորեն պետք է հիշատակել նաև արդի հայագիտության անխոնջ մշակի բազմաթիվ այլ հոդվածները[7]:

---

5 Նիկողայոս Ադոնցի արխիվի հայտնագործության մասին մանրամասները տե՛ս **Պ. Յ. Յովհաննիսեան**, **Ե. Փամպուքեան**, Ականաւոր հայագէտ Նիկողայոս Ադոնցի անձնական արխիւը. «**Ազդակ**», 1993, 9 մարտի (թ. 4), էջ 4, 7, «**Ազատամարտ**», 1993, 9-15 ապրիլի (թ. 14), էջ 13, «Հայաստանի Հանրապետություն», 1993, 7 մայիսի (թ. 89), էջ 3-4, **Պ. Հովհաննիսյան**, Նիկողայոս Ադոնցի Բեյրության դիվանը, «Նպատակ», հունիս (թ. 8), էջ 3,

6 Տե՛ս **Նիկողայոս Ադոնց**, Երկեր, հ. Ա., Պատմագիտական ուսումնասիրություններ, Երևան, 2006 (652 էջ + 1 ներդիր), հ. Բ., Պատմա-բանասիրական ուսումնասիրություններ, Երևան 2006 (680 էջ + 1 ներդիր), հ. Գ., Հայերենագիտական ուսումնասիրություններ, Երևան, 2008 (496 էջ + 1 ներդիր), հ. Դ., Քննական պատմություն Հայոց, Երևան 2009 (720 էջ + 2 ներդիր), հ. Ե., Հայ-բյուզանդական ուսումնասիրություններ, Երևան, 2012 (664 էջ + 2 ներդիր), հ. Զ., Հրապարակախոսություն, Երևան, 2012 (540 էջ + 1 ներդիր):

7 Այդ հոդվածների թիվը 60-ից ավելին է, տե՛ս **Պ. Հ. Հովհաննիսյան**, Նիկողայոս Ադոնցի անտիպ նամակներից, «Բանբեր Երևանի համալսարանի», 1988, թ. 3, էջ 87-96, նույնի Малоизвестная статья “Турецкая нота и Турецкая Армения” Николая Адонца, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1990, թ. 4, էջ 72-77, նույնի Նիկողայոս Ադոնցի «Մարզպան Վասակը պատմաբաններ դատաստանի առաջ»

Պրոֆ. Հ. Վ. Հովհաննիսյանի կողմից հայ պատմագիտության մեծերի ժառանգության քննական հրապարակության այս շարքի հիմնարար գործերի թվում պետք է հիշատակել ինչպես պատմագիրներ Ուխտանեսի, Անանուն Զրուցագրի (Կեղծ Շապուհ Բագրատունի), Դավիթ Ալավկա Որդու, այնպես էլ՝ Ղ. Ալիշանի[8], Հ. Մանանդյանի[9], Ա. Պերպերյանի[10], Ա. Հովհաննիսյանի[11], Գ. Ստեփանյանի[12] և այլոց աշխատանքները: Իբրև հրապարակչական խորհրդի անդամ և առանձին հատորների կազմող ու խմբագիր պրոֆ. Պ. Հ. Հովհաննիսյանի գիտական գործունեության մի ուրույն բնագավառ է կոթողային «Մատենագիրք Հայոց» բազմահատորյակի Զ.-ԺԶ. հատորների (Բեյրութ-Երևան, 2007-2012) հրապարակության գործում ներդրած վաստակը: Նույնը պետք է ասել նաև «**Հայաստանի ազգային ատլասում**» (Երևան, 2008) նրա հրապարակած «Հայկական զաղթավայրերը և Սփյուռքը» հոդվածի և «Հայկական արքայատոհմերի և Ամենայն Հայոց Կաթողիկոսների ցանկերի» մասին: Եւ հարկ է մատնանշել, որ հոբելյարի ծավալած գիտական արգասավոր այդ գործունեությունը մեկ անգամ ևս հաստատում է, որ **գիտությունը շուկայական արժեք չունի՝ նրա չարչիական ըմբռնմամբ**:

Ասված է, թե «Գաղափարների պայքարը նույնպես չի կարելի շահել առանց գրքերի»: Այդ տեսանկյունից ուրույն արժեք են ներկայացնում պրոֆ. Հ. Վ. Հովհաննիսյանի գրչին պատկանող և նրա կողմից խմբագրված բնագրագիտական և աղբյուրագիտական գործերը: Այդ շարքում մեծ արժեք են ներկայացնում ուսանողության և ընթերցող լայն շրջանակների կողմից մեծ գնահատանքով ըն-

---

աշխատության մասին. «**Ազդակ**», 1993,18 փետրվարի (թ. 283), էջ 4, նույնի Նիկողայոս Ադոնցի նորահայտ հոդվածը Հայկական հարցի մասին («Հայկական հարցի ներքին կողմերից մեկը»). «Բանբեր Երևանի համալսարանի», 1993, թ. 1, էջ 126-132, նույնի Ադոնցեան մասունքներ, «Հայկազեան հայագիտական հանդէս», հ. 13, Պէյրութ, 1993, էջ 107-111, նույնի Еще одна малоизвестная статья Николая Адонца по Армянскому вопросу. «Լրաբեր հասարակական գիտությունների», 1993, թ. 1, էջ 137-148 (Հ. Ա. Ավետիսյանի հեղինակակցությամբ), նույնի Նիկողայոս Ադոնցի «Հայաստանը և հայկական զաղթօջախները» նորահայտ հոդվածը. «Գարուն», 1994, թ. 1, էջ 68-75, նույնի Նիկողայոս Ադոնցի իրանագիտական ժառանգությունից. «Իրան-Նամե», 1994, թ. 1, էջ 3, նույնի Նիկողայոս Ադոնցը Հայոց Եկեղեցու պատմության պատմաբան. «Հայկազեան հայագիտական հանդէս», հ. 17, Պէյրութ, 1997, էջ 263-286, նույնի Նիկողայոս Ադոնցի «Հայկական վարք սրբոց ժողովածուները» անտիպ աշխատությունը. «Աստվածաշնչյան Հայաստան» (ժող.), Ս. Էջմիածին, 1999, էջ 23-25, նույնի Նիկողայոս Ադոնցը և Հայկական հարցը.ՊԲՀ, 1999, թ. 1, էջ 130-138, նույնի Ն. Ադոնցի «Հայոց քննական պատմության» տեղծագործական ճակատագիրը, ՊԲՀ, 2001, թ. 1, էջ 63-78, նույնի Նիկողայոս Ադոնցի գիտական ժառանգության նորահայտ էջերից, ՊԲՀ, 2001, թ. 2, էջ 277-290, նույնի Նիկողայոս Ադոնցի «Կիբելա աստվածուհին» անհայտ աշխատությունը. «Բանբեր Մատենադարանի», թ. 18, էջ 181-215 (համահեղ.՝ Օ. Վարդազարյան), նույնի Знаменитый выпускник Санкт-Петербургского университета: жизнь и творчество Николая Георгевича Адонца (1871-1942 гг.). «Вестник Санкт Петербургского государственного университета», сер. 2, вып. 1, СПб., 2014, էջ 83-90 և այլն:

8 Տե՛ս **Ղ. Ալիշան**, Սիսական (Բ. հրատ.), Երևան, 2009 (536 էջ), նույնի Շիրակ (Բ. հրատ.), Երևան, 2010 (204 էջ):

9 Տե՛ս **Հ. Մանանդյան**, Երկեր, հ. Է., Բանասիրական ուսումնասիրություններ, Երևան, 2010 (580 էջ), հ. Ը., Բնագրագիտական աշխատություններ, Երևան, 2011 (556 էջ):

10 Տե՛ս **Ա. Պերպերեան**, Պատմութիւն Հայոց (Բ. հրատ.), Ս. Էջմիածին, 2010 (600 էջ):

11 Տե՛ս **Ա. Հովհաննիսյան**, Պատմագիտական ուսումնասիրություններ, Ս. Էջմիածին, 2007 (208 էջ):

12 Տե՛ս **Գ. Ստեփանյան**, Երգենա, Երևան, 2005 (726 էջ):

դունված «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա (Սկզբից մինչև IX դարի կեսերը)» (հ. Ա., Երևան, 1981, Ա. Գ. Աբրահամյանի աշխատակցությամբ, 944 էջ), «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», հ. 1, Հնագույն ժամանակներից մինչև Ք. հ. 298 թ., (Երևան, 2007, 576 էջ, համահեղ.՝ Ա. Ե. Մովսիսյան), «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա» հ. 2, 3-րդ դարի վերջերից մինչև 9-րդ դարի կեսերը, (Երևան, 2011, 696 էջ, համահեղ.՝ Ա. Ե. Մովսիսյան): Նույնը պետք է ասել նաև նրա կողմից խմբագրված Ստ. Մելիք-Բախշյանի «Հայոց պատմության աղբյուրագիտություն (հնագույն ժամանակներից մինչև XVIII դար)» Բ. (Երևան, 1989, 344 էջ) և Գ. (Երևան, 1996, 336 էջ) գրքերի, ինչպես նաև իր հեղինակությամբ հրապարակված «Մովսես Խորենացու մատենագիտություն. Երկասիրություններ» (Երևան, 1991, 88 էջ), «Մովսես Խորենացի. Մատենագիտություն» (Երևան, 2013, 436 էջ) հիմնարար աշխատությունների մասին: Եւ վերջապես այս շարքի՝ նրա գրչին պատկանող մնայուն աշխատանքների թվում պետք է հիշատակել նաև «Հայոց պատմություն» ակադեմիական նոր հրատարակության համար նրա գրած «V-XIX դարի առաջին կեսի հայ պատմագրությունը» ընդարձակ ուսումնասիրությունը, որի մի մասը արդեն հրապարակվել է (տե՛ս «XVII-XIX դարի առաջին կեսի հայ պատմագրությունը», Հայոց պատմություն, հ. III, գիրք առաջին, Երևան, 2010, էջ 104-117, 316-332), իսկ մյուս մասը գտնվում է հրապարակության գործընթացում: Այս շարքում արժանահիշատակ է նաև հոբելյարի խմբագրությամբ և հեղինակությամբ նոր դարաշրջանի Արևելյան Հայաստանի առաջին բարձրագույն դպրոցի՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի (Աստվածաբանական համալսարանի) պատմական դերի համակարգված գնահատմանը նվիրված «Նշանավոր ճեմարանականներ» ժողովածուի Ա. (Ս. Էջմիածին, 2005, 344 էջ) և Բ. (Ս. Էջմիածին, 2009, 504 էջ) պրակների հրապարակությունը:

Պրոֆ. Պ. Հ. Հովհաննիսյանի գիտահետազոտական գործունեության մեկ ուրույն մաս են կազմում **Հայկական հարցին և եղեռնին** նվիրված աշխատությունները: Նրա կողմից կազմվել, խմբագրվել և ծանոթագրություններով հրատարակվել են Ն. Աղոնց, Հայկական հարց (Երևան, 1996, 244 էջ) և Армянский вопрос. Геноцид армян. Библиография литературы на русском языке (1877-1997), Ереван, 1998 (համահեղ.՝ Է. Ա. Բաբայան) հիմնարար աշխատանքները: Արժեքավոր է նաև մատենագիտական վերոնշյալ գրքում նրա հրապարակած “К истории библиографии по Армянскому вопросу и геноциду” (էջ 6-18) և «Հայոց ցեղասպանությունը. Ուսումնասիրություններ» ժողովածուի (Երևան, 2001, էջ 8-10, 245-266) «Հայկական հարցի և ցեղասպանության մատենագիտության պատմության համառոտ ակնարկ» հոդվածները: Այս ոլորտում արժանահիշատակ է հատկապես նրա մասնակցությունը «Սև գիրք». նշանավոր օտարերկրացիները թուրքական ոճիրների և հայոց ցեղասպանության մասին (Երևան, 2011, 720 էջ) ժողովածուի հրապարակությանը:

Ասված է, թե գեղեցիկ գրել, միաժամանակ նշանակում է գեղեցիկ մտածել, ընկալել և վերարտադրել: Հակիրճությունը հոգեկան որոնումների արգասիք է, իսկ գիտնականի ոճը լեզվական արտահայտչամիջոցներով արտացոլում է նրա ոգին: Այս պնդման վկայություններից մեկը պետք է համարել հանրագիտարանային գրականության մեջ («Հայկական Սովետական Հանրագիտարան», «Հայաստանի Համառոտ Հանրագիտարան», «Ամենայն Հայոց Կաթողիկոսներ. հանրագիտարան» (տեղեկատու պատկերագիրք), «Քրիստոնյա Հայաստան. հանրագիտարան» և «Ամենայն Հայոց Կաթողիկոսներ. հանրագիտարան») հրատարակված պրոֆ. Պ. Հովհաննիսյանի գրչին պատկանող ավելի քան 134 հոդվածները:

Պրոֆ. Պ. Հ. Հովհաննիսյանի գիտամանկավարժական գործունեությունը սերտորեն աղերսվում է նաև Հանրապետության դպրոցները և բուհերը դասագրքերով ապահովելու շնորհակալ գործին: 2002-2005 թթ. նրա խմբագրությամբ Հանրապետության հանրակրթական դպրոցների 4-10-րդ դասարանների համար հրատարակվել են **հայ իրականության համար եզակի «Հայոց Եկեղեցու պատմություն» փորձնական և ապա՝ հիմնական դպրոցական դասագրքերը**, որոնք վերահրատարակվել են 2008-2013 թթ. (2013 թ. նրա խմբագրությամբ հրատարակվել է նաև ավագ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտների համար նախատեսված «Հայոց Եկեղեցու պատմություն» դասագիրքը): Նա գործուն մասնակցություն է ունեցել նաև 2007 թ. և ապա 2013 թ. հանրակրթական դպրոցների 5-6-րդ դասարանների համար լույս տեսած «Հայրենագիտություն» դասագրքի հրատարակչական աշխատանքներին: Իսկ 2007-2014 թթ. գործուն մասնակցություն է ունեցել հանրակրթական դպրոցների 6-7-րդ դասարանների համար և ավագ դպրոցի 10-րդ դասարանի համար «Հայոց պատմություն» դասագրքերի ստեղծման աշխատանքներին: Նա միաժամանակ համահեղինակ է բուհական **«Հայոց պատմություն. հիմնահարցեր: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը»**. Ուսումնական ձեռնարկ բուհերի ոչ մասնագիտական ֆակուլտետների համար (Երևան, 2000: Հեղինակ է դասագրքային 5 հատվածների, էջ 72-116) և **«Հայոց պատմություն».** դասագիրք բուհերի համար (Երևան, 2012: Հեղինակ է դասագրքային 5 հատվածների, ընդհանուր ծավալը՝ 157 էջ) դասագրքերի, ինչպես նաև ուսումնական և ուսումնամեթոդական այլ ձեռնարկների[13]:

Նրա կարգախոսն է՝ ճշմարտությունը հասցնել ուսանող երիտասարդությա-

13 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմության թեկնածուական մինիմումի քննության համար հանձնարարվող գրականություն» (Երևան, 1978, 22 էջ), «Հայ ժողովրդի պատմություն դասընթացի գործնական պարապմունքների թեմաներ և գրականություն» (Երևան, 1978, 35 էջ), «Ծրագիր հայ ժողովրդի պատմության» (ԵՊՀ և Հայկական մանկավարժական ինստիտուտների համար Երևան, 1979, 82 էջ, Բ. հրատ., Երևան, 1985, 87 էջ), «Հայ ժողովրդի պատմություն դասընթացի գործնական պարապմունքների պլաններ» (Երևան, 1986, 76 էջ), «Ծրագիր Հայոց պատմության» (Երևան, 2000, 86 էջ), «Հայ ազատագրական շարժումները (XV դարի կես - XVIII դարի վերջ)» դասախոսություններ (Երևան, 2010, 124 էջ):

նը և բազմահազար ընթերցողներին, նպաստել նրանց կրթության ու դաստիարակության գործին, որով կրկնապատկվում և բազմապատկվում է վերլուծաբանհեղինակի՝ իր աշխատությունների արժեքը: **Նա ներկայացուցիչն է այն մեծ դպրոցի, որը Ի. դարում գիտական աննախադեպ բարձունքների հասցրեց հայագիտությունը,** որով մեկ անգամ ևս վերահաստատվեց այն իրողությունը, որ Ճշմարիտ մտավորականը անբաժան է իր դարաշրջանից, ապրում է իր ժամանակաշրջանի բարքերով ու սովորություններով, բաժանում նրա հայացքներն ու պատկերացումները (Հեգել): **Այլ կերպ ասած՝ նա գրում է ոչ թե այն պատճառով, որ ինչ-որ բան է ուզում ասել, այլ որ ասելիք ունի:** Ահա թե ինչու նրա գրչին պատկանող աշխատությունները գնահատվել և բազմիցս գրախոսվել են հայրենական և արտասահմանյան գիտական պարբերականներում և ԶԼՄ-ներում:

Այդ ամենը թույլ են տալիս լիովին համերաշխել ընդհանրացնող այն պնդման հետ, որ «... պրոֆ. Պ. Հովհաննիսյանը իր կյանքը անմնացորդ նվիրել է մանկավարժությանը և գիտությանը: Նա ջանք չի խնայում երիտասարդ պատմաբաններ պատրաստելու ազնիվ և մեծ նվիրում պահանջող աշխատանքում: Անցած տարիների ընթացքում նա ղեկավարել է 10 ասպիրանտների գիտական աշխատանքներ, որոնցից 6-ը պաշտպանել են թեկնածուական ատենախոսություններ: Նրա հարյուրավոր ուսանողներ այսօր ներկայացնում են հայ պատմագիտական դպրոցի հիմնական կորիզը»[14]: Անհրաժեշտաբար պետք է ավելացնել նաև այն փաստը, որ երկարատև ու անհոգնաբեկ աշխատանքով հարգարժան հոբելյարի նկատմամբ նույն ոգևորությամբ ու ակնածանքով են վերաբերվում նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարձրագույն հոգևոր կրթական հաստատության սաները, որոնցից շատերը ձեռնադրված հոգևորականներ են և ծառայում են Մայր հայրենիքում և սփյուռքում: Ազգօգուտ և եկեղեցանվեր այդ ծառայության համար էլ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի 2004 թ. նոյեմբերի 3-ի թիվ 268 սրբատառ Կոնդակով Պ. Հ. Հովհաննիսյանը պարգևատրվել է Հայ Առաքելական Ս. Եկեղեցու «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» պատվո բարձր շքանշանով[15]:

Մնում է ավելացնել, որ վաստակաշատ պատմաբանն ու մանկավարժը գնահատելի ավանդ է ներդրել նաև հրապարակախոսության ոլորտում: Փաստն այն է, որ նա հայ պատմագիտության ճանաչված ներկայացուցիչների գիտատեսական ժառանգության, կենսամատենագիտության, հայոց պատմության հիմնահարցերի, պատմության զեղծարարների դեմ ուղղված շուրջ 120 արժեքավոր վերլուծականներ է հրապարակել նաև «Երևանի համալսարան», «Երեկո-

14 «Պետրոս Հովհաննիսյան». Կենսամատենագիտություն, էջ 8: Հարկ է ավելացնել նաև, որ արդի հայ պատմագիտական դպրոցի հիմնական կորիզը կազմող Պ. Հովհաննիսյանի սաներից շատերը ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ են, գիտության դոկտորներ և թեկնածուներ, պրոֆեսորներ և դոցենտներ:

15 Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ Կոնդակը տե՛ս «Էջմիածին», 2004, ԺԱ.-ԺԲ., էջ 31-32:

յան Երևան», «Խորհրդային Հայաստան», «Հայաստանի Հանրապետություն», «Սևան», «Գրական թերթ», «Հայաստան», «Ազգ», «Տնտեսագետ», «Գրքերի աշխարհ», «Հրազդան», «Նոր աշխարհ» (Աթենք), «Երկիր», «Հնչակ Հայաստանի», «Զարթոնք» (Բեյրութ), «Ազդակ» (Բեյրութ), «Կայծեր» (Բեյրութ), «Արարատ» (Բեյրութ), «Ազատամարտ», «Յառաջ» (Փարիզ), «Ասպարէզ» (Լոս Անջելես), «Հայոց աշխարհ», «Հայկական ժամանակ», «Պիոներ», «Ազդակ», «Հայոց աշխարհ», «Օր», «Քրիստոնյա Հայաստան», «Երևան. 7 օր», «Այբ-Ֆե», «Ազատամտություն», «Սյունյաց երկիր», «Սիսիանի ձայն», «Տարեգիր», "Голос Армении", "Ноев ковчег" (Մոսկվա) և բազմատիրաժ այլ լրատուներում ու «Նպատակ» գիտահասարակական պարբերաթերթում:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան-աստվածաբանական համալսարանի տեսչությունը, ամբիոնները, պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողները, իրենց ձայնը միացնելով պրոֆ. Պ. Հ. Հովհաննիսյանի գործընկերների և բազմահազար սաների ձայնին, սրտանց շնորհավորում են նրան ծննդյան 70-ամյակի առթիվ, մաղթում են կենաց արևշատություն և ստեղծագործական նորանոր հաջողություններ ի փառս հայագիտության, հայկական դպրոցի և ազգային մշակույթի: